



## Մամուլի հաղորդագրություն

### Ռոբոտների համաշխարհային օլիմպիադան՝ առաջին անգամ Հայաստանում

08 հուլիսի, 2016 թ. , Երևան

Հուլիսի 8-ին առաջին անգամ Հայաստանում «Այբ» կրթական հիմնադրամն անցկացրեց ռոբոտաշինության ամենազանգվածային դպրոցական մրցույթներից մեկը՝ Ռոբոտների համաշխարհային օլիմպիադան: Արդեն իսկ առաջին տարում մրցույթին մասնակցեց Հայաստանի տարբեր դպրոցներից 9 թիմ:

Մրցույթի ընթացքում թիմերը նախ փորձեցին իրենց ուժերը նախընտրական փուլերում, ապա մեկնարկեց եզրափակիչ փուլը: Թե՛՛՛՛՛ պայքարից հետո Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի հայաստանյան փուլի հաղթող ճանաչվեց Arm Cyber Kids հավաքական թիմը, որը նոյեմբերին կմեկնի Դելի՝ մասնակցելու միջազգային փուլին և ներկայացնելու այնտեղ Հայաստանը:

Այս տարի Ռոբոտների համաշխարհային օլիմպիադան անցնում է «Պայքարի՛ր թափոնների դեմ» կարգախոսի ներքո: Ազգային փուլի ընթացքում ռոբոտներն օգնեցին երեխային մաքրություն անել դեպի դպրոց ճանապարհի ողջ ընթացքում, հավաքեցին անպիտան աղբն ու լցրին աղբամշակման տեսակավորված արկղերի մեջ և կատարեցին նմանատիպ այլ առաջադրանքներ:

«Այս մրցույթով «Այբ» հիմնադրամը փորձում է հնարավորինս շատ հայ երեխաների բերել ռոբոտիկայի աշխարհ: Այն հնարավորություն է տալիս աշակերտներին առաջին քայլերն անելու ռոբոտաշինության և ճարտարագիտության մեջ, բացահայտելու իրենց ներուժն այդ ոլորտներում: Ռոբոտիկան նոր սերնդի մոտ այսօրվա ու վաղվա մարտահրավերներն ընդունելու և դրանք հաղթահարելու գործում շահադրժման գերազանց ճանապարհ է», - բացման խոսքում նշեց «Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Դավիթ Սահակյանը:

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադան (ՌՀՕ) «Այբ» կրթական հիմնադրամի կազմակերպած դպրոցական միջազգային բազմաթիվ մրցույթներից մեկն է: Մրցույթը նպատակ ունի աշակերտներին ներգրավել գործնական գիտական գործունեության մեջ, զարգացնել աշակերտների տրամաբանությունը և ճարտարագիտական ունակությունները, նախադրյալներ ստեղծել աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացման համար, աշակերտներին տալ հնարավորություն՝ դպրոցում ռոբոտների և ռոբոտային համակարգերի ուսումնասիրության միջոցով ընդարձակելու իրենց մտահորիզոնը:

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադան հիանալի հարթակ է 21-րդ դարում արդիական գիտելիքներն ու հմտությունները յուրացնելու համար: Այն գիտության, տեխնոլոգիայի և կրթության ոլորտներին առնչվող նախագիծ է: Միջազգային առաջին մրցույթը տեղի է ունեցել 2004 թ.-ին, և նրան մասնակցել է 12 երկրից 4000 թիմ: Այսօր ՌՀՕ-ին մասնակցում է 55 երկրի ավելի քան 21000 թիմ:

«ՌՀՕ 2016»-ի ազգային փուլի բացառիկ կազմակերպիչ՝ «Այբ» կրթական հիմնադրամ: Բացառիկ հովանավոր՝ «Creative Educational Technologies» (CET) ընկերություն, որը «LEGO® Education»-ի պաշտոնական մատակարարն է Հայաստանում: